

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՊԻՆ Բ.
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(19 յունիսի, 2021 թ.)

Սիրելի՛ ժողովուրդ,

Մեր հայրենիքի համար վճռական օրուայ շեմին ենք։ Խորհրդարանական արտահերթ ընտրություններին մասնակցութեամբ որոշելու ենք մեր երկրի գալիքի կերտման ուղին։ Մենք ամէնքս ուզում ենք ապրել խաղաղ ու անվտանգ, կայուն զարգացող երկրում, հեռու ցնցումներից ու պառակտումներից եւ կառուցել մեր արժանապատիւ ու բարօր կեանքը ազգաշահ ու հայրենաշէն ձեռքբերումների վրայ։

Այսօր՝ մեզ պատուհասած ծանր կորուստների պայմաններում, առաւել, քան երբեւէ մենք պարտք ու պատասխանատուութիւն ունենք մեր անկախ պետականութեան պահպանման ու ամրապնդման, մեր հայրենիքի զօրացման համար։ Պատասխանատուութիւն ունենք մեր զոհուած նահատակների լուսավառ յիշատակի, մեր ներկայի ու գալիքի, մեր սերունդների առջեւ։ Ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս, մեր ժողովրդի առջեւ յառնած է հրամայականը՝ թօթափելու յետպատերազմեան եւ նախընտրական օրերին ստեղծուած լարուածութիւնը, վերահաստատելու համերաշխութիւնը։ Նաեւ կենսական անհրաժեշտութիւն է, որ յետընտրական շրջանում մեր երկրի ներքին կեանքն ընթանայ հանդարտութեան եւ ողջախոհութեան մթնոլորտում։ Երբեք եւ ոչ մի կերպ չեն կարող արդարացուել ազգը պառակտող գործողութիւնները եւ հասարակութեան մէջ թշնամանքի սերմանումը, բռնութեան ու հաշուեյարդարի կոչերը, բախումներ հրահրելը։ Հայրապետական Մեր յորդորն է, սիրելի՛ ժողովուրդ, զերծ մնալ ատելութեան խօսքից, անհանդուրժողականութիւնից, դրսեւորել զգօնութիւն, օրինայարգութիւն եւ նոր փորձութիւններով շփտանգել հայրենական մեր կեանքը։ Մեր պատմութեան նոր էջը կերտենք հաւատքով ու լաւատեսութեամբ, սիրով ու միասնականութեամբ։

Միշտ յիշենք, որ Հայաստանում կայուն իրավիճակով, մեր ամուր պետականութեամբ է նաեւ պայմանաւորուած Արցախի ապագան, արցախաբնակ մեր քոյրերի ու եղբայրների հիմնախնդիրների յաղթահարումը: Այս գիտակցութեամբ, այս ոգով ու յանձնառութեամբ մասնակցութիւն բերենք ընտրութիւններին, անտարբեր չմնանք մեր երկրի վաղուայ օրուայ հանդէպ, որպէսզի մեր ազգային ու հայրենական անդաստանում տեղ չգտնեն նեղութիւններ ու տառապանքներ, նոր արհաւիրքներ, որպէսզի միասիրտ ու միախորհուրդ յաղթահարենք ներքին ու արտաքին մարտահրաւէրները, կառուցենք հզօր ու պայծառ հայրենիք՝ խարսխուած մեր ինքնութիւնը պայմանաւորող ազգային ու հոգեւոր մեր արժէքների վրայ: Այս ընթացքով ի զօրու կլինենք առատացնել տէրունական օրհնութիւնը մեր կեանքում եւ Հայաստանում ու Արցախում մարմնաւորել մեր ժողովրդի բարօրութեան ու առաջընթացի լուսաւոր տեսիլքները:

Սիրելիներ, աղօթենք միասնաբար, որ առկայ ճգնաժամի յաղթահարման բոլոր ջանքերը Աստծոյ ողորմութեամբ պսակուեն բարի արդիւնքներով: Հայցենք, որ ամենախնամ Տէրը Իր շնորհների եւ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի մեր հայրենիքն ու աշխարհասփիւռ մեր ողջ ժողովրդին, պարգեւի իմաստնութիւն ու զօրութիւն, խաղաղ ու ապահով կեանք Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ:

Աստծոյ սէրը, օրհնութիւնն ու ողորմութիւնը մեր հայրենիքին ու մեզ ամէնքիս, ամէն:

